ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՇԱՌԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՓՈՒԼ

Դիտարկումներ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ի այցելության առթիվ

Բարիգալատյան արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հայ-ասորական հարաբերությունները դեռեւս վաղ միջնադարից կրել են զարգացումների երկու հիմնական բնույթ՝ մշակութային եւ եկեղեցական: Անշուշտ, հետագա դարերում, մանավանդ Կիլիկյան Հայաստանի պետական կարգի առկայության պայմաններում, դրանք երբեմն ունեցել են նաեւ շեշտված քաղաքական նրբերանգներ, սակայն միշտ էլ հաստատվել ու զարգացել են եկեղեցական համատեքստի շրջանակներում: Եւ եթե միջնադարյան ժամանակաշրջանում ձեւավորված ու զարգացած հայ-ասորական առնչակցությունները հայագիտության եւ ասորագիտության ոլորտներում քիչ թե շատ մանրամասնորեն վերլուծված են, ապա նոր ժամանակներում դրանց առանձնահատկություններն ու զարգացման ընթացքն այդքան էլ ուսումնասիրված չէ: Անկասկած, Կիլիկյան Հայաստանում միասնաբար գոյատեւող Հայ եւ Ասորի եկեղեցիները զրկվեցին հզոր պետական աջակցությունից Կիլիկյան Հայոց թագավորության թուլացման եւ կործանման հետեւանքով: Աստիճանաբար տարածաշրջանում հզորացող իսլամական պետական գործոնն ավելի ստիպեց երկու քույր եկեղեցիներին միասնաբար գործելու եւ քրիստոնեական հավատն ու արժեքները պահպանելու: Օսմանյան կայսրության հզորացման եւ հետագա գոյության ողջ ընթացքում հայ-ասորական եկեղե-

ցական հարաբերություններն ստացան եկեղեցական փոխհարաբերությունների մի փոքր այլ, եկեղեցաքաղաքական երանգ: Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքական աթոռի հաստատումով Հայոց պատրիարքը դարձավ նաեւ Արեւելյան Ուղղափառ (ոչ քաղկեդոնական) եկեղեցիների ներկայացուցիչը հաչս Օսմանյան տերության:

Իհարկե, այս դիտարկման նպատակը պատմաքննական բնույթ չի հետապնդում, սակայն որոշ իմաստով փորձում է վերհանել պատմական մի նոր փուլ, որն սկսվեց հայ-ասորական եկեղեցական հարաբերություններում Հայաստանի անկախացումից անմիջապես հետո: 2002 թ. հոկտեմբերի 18-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի հրավերով Հայաստան այցելեց Ասորի Ուղղափառ եկեղեցու պատրիարք Մոր Իգնատիոս Զաքքա Ա. Իվասը[1]: Ասորի Ուղղափառ եկեղեցու հովվապետի այս այցը, կարելի է ասել, որոշ իմաստով նշանավորեց հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների նոր փուլը: Նոր՝ այն իմաստով, որ արդեն Հայոց եկեղեցին այդ հարաբերություններին մասնակից էր բոլորովին այլ պատմաքաղաքական պայմաններում. Եթովպական Ուղղափառ եկեղեցու հետ միասին Հայաստանյայց եկեղեցին նույնպես, իբրեւ Արեւելյան Ուղղափառ (ոչ քաղկեդոնական) եկեղեցի, դարձավ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների մեջ ազգային անկախ պետականության պայմաններում գործող եկեղեցի: Ըստ էության, Ասորի Ուղղափառ եկեղեցու հովվապետն արդեն նոր եղբայրական հարաբերությունների տեսլականով էր այցելել Էջմիածին, ինչպես արտահայտված էր նրա ողջույնի խոսքում. «Մենք փափագեցինք այստեղ գալ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը իր նոր հոգեւոր պաշտոնի համար եւ բոլոր հայերիդ շնորհավորելու իր ընտրության առթիվ եւ նաեւ շնորհավորելու բոլորիդ որպես կենդանի ժողովուրդ: Հպարտ ենք հայ ժողովրդով եւ ասորի ժողովրդով, որոնք ընդունեցին Քրիստոսին եւ Նրա համար իրենց արյունը հեղեցին»[2]:

Ահա այս նոր բացված էջով էլ թերեւս կարելի է դիտարկել երջանկահիշատակ Մորան Մոր Իգնատիոս Զաքքա Ա. Իվասի հաջորդ, Ասորի Ուղղափառ եկեղեցու եւ Անտիոքի Աթոռի նոր գահակալ Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ի այցելությունը Հայաստան՝ սույն թվականի հոկտեմբերի 10-ին, Նորին Սրբություն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով:

---

1 Սա Ասորի Ուղղափառ եկեղեցու հովվապետի երկրորդ այցն էր Հայաստան. առաջին անգամ Զաքքա Ա. Իվաս պատրիարքը Հայաստան էր այցելել 1982 թ., Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով՝ մասնակցելու Նորին Սրբության գահակալության 27-րդ տարեդարձի հանդիսություններին (տե՛ս «Էջմիածին», 1982, Ը.-Թ., էջ 3-10):

2 Տե՛ս «Էջմիածին», 2002, Ժ., էջ 6:

Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Բ. նորընտիր պատրիարքը (ասոր.՝ Moran Mor Ignaţios Aphrem Trayono*) ծնվել է 1965 թ., Ղամիշլիում (Միրիայի Արաբական Հանրապետություն): 1977 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ նա իր հոգևոր բարձրագույն կրթությունն ստացել է Լիբանանում (Բիքֆայա): 1984-1988 թթ. սովորել եւ աստվածաբանության բակալավրի աստիճանով ավարտել է Ղպտի Ուղղափառ եկեղեցու աստվածաբանական ճեմարանը Կահիրեում (Եգիպտոս): 1985 թ. ընդունում է վանական կուսակրոն կարգ՝ իբրեւ նոր անուն ընտրելով «Եփրեմ»-ը՝ ի պատիվ Դ. դարի նշանավոր ասորի հոր՝ Ս. Եփրեմ Ասորու: 1991 թ. բարձրագույն աստվածաբանական կրթությունը շարունակել է Մայնութի (Իռլանդիա) Ս. Պատրիկ աստվածաբանական քոլեջում՝ ստանալով աստվածաբանության լիցենցիատի եւ դոկտորի գիտական աստիճաններ (1992 եւ 1994 թթ.): 1996 թ. հունվարի 28-ին ձեռամբ Իգնատիոս Զաքքա Ա. Իվաս պատրիարքի ձեռնադրվում է մետրոպոլիտ-արքեպիսկոպոս եւ պատրիարքական տեղապահ Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի: Առաջնորդական այս նոր կոչման մեջ նա բավական ակտիվ միջեկեղեցական գործունեություն է ծավալում՝ մի շարք պատասխանատու պաշտոններ վարելով ԵՀԽ-ում եւ այլ միջեկեղեցական կառույցներում: 2014թ. մարտի 21-ին երկար հիվանդությունից հետո մահանում է Իգնատիոս Զաքքա Ա. Իվաս պատրիարքը: Շուտով Ասորի Ուղղափառ եկեղեցու Սրբազան Սինոդը Լիբանանի Աթքանե բնակավայրում՝ Ս. Հակոբ Բարադեոս վանքում Մետրոպոլիտ-Արքեպիսկոպոս Աֆրամ-Կյուրեղ Քարիմին ընտրում է Ասորի Ուղղափառ եկեղեցու 123-րդ պատրիարք: Նույն թվականի մայիսի 29-ին կայանում է նորընտիր պատրիարքի գահակալությունը՝ Դամասկոսի Ս. Եփրեմ վանքում: Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ն հեղինակ է մի քանի աստվածաբանական ուսումնասիրությունների ու բարոյախրատական գրքերի:* Անտիոքի եւ Համայն Արեւելքի նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ին ուղեկցող պատվիրակության մեջ էին Տրիպոլիի եւ Լեռնային Լիբանանի արքեպիսկոպոս, Ս. Սինոդի գլխավոր քարտուղար Թեոփիլոս Սալիբան, Հոմսի արքեպիսկոպոս Սիլվանոս Բուտրոս ալ Նեհմեհը, պատրիարքական քարտուղար Տիմոթեոս Մաթթա ալ Խուրին, Հայր Կարլոս Բաբին եւ Հայր Ջոզեֆ Բալին: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքին, գլխավորությամբ Նորին Սրբություն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, դիմավորեցին Տ. Նաթան արք.

Հովհաննիսյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը եւ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Ծիսահայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա վրդ. Բաղումյանը: Մայր Աթոռ ժամանելով՝ երկու հովվապետները, «Հրաշափառ» շարականի երգեցողության եւ զանգերի ղողանջների ներքո թափորով առաջնորդվեցին Մայր Տաճար, որտեղ Իջման Ս. Սեղանի առջեւ կատարվեց միասնական գոհաբանական աղոթք: Նորին Սրբությունը, ուրախություն հայտնելով Ասորի եկեղեցու հովվապետի այցի առիթով, շեշտադրեց հատկապես Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ.-ի ընտրությամբ՝ հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների եղբայրական պատմական իրողությունը.

«Մեր ուրախությունն առավել է, քանզի ճանաչում ենք Ձեզ որպես քաջ եւ անձնազոհ առաջնորդի, եղբայրասեր ու մեծ հոգի ունեցող անձի, որին այլեւս հյուրընկալում ենք, որպես հոգեւոր պետի: Ձեր այցելությունն սկսում է «Հրաշափառի» բարի գալստյան արարողությամբ, աղոթքով Միածնաէջ այս տաճարում: Միասնական մեր աղոթքը վկայությունն է մեր քույր Եկեղեցիների հավատքի միության եւ ոգին է քրիստոնեական վկայության՝ հիմնված մեր սուրբ հայրերի կողմից մեզ ավանդված սրբազան ավանդության վրա: Մենք, որպես երկնավոր Հոր հարազատ զավակներ, միասնաբար դիմում ենք մեր Տեր Աստծուն: Պողոս առաքյալի խոսքերով, որպես «Եղբայրնե՛ր, խոստման որդիներ» (Գաղ. Դ. 28):

Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցու դարավոր հարաբերությունները հատկանշված են եղել քրիստոնեական սիրո, եղբայրության եւ գործակցության ոգով: Ձեր այցելությունը, որպես նորընտիր գահակալ մեր քույր Եկեղեցու, հաստատումն է այս իրողության: Փոխհարաբերությունների զորացումը մեր քույր Եկեղեցիների հրամայական անհրաժեշտություն է այս օրերին, մանավանդ, երբ մեր երկու Եկեղեցիները՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցին եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կանգնած են մեր հավատավոր զավակների կյանքը վտանգող եւ աշխարհը մտահոգող իրավիճակների առաջ:

Միրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, հակառակ Սիրիայում ընթացող ռազմական գործողությունների եւ Մերձավոր Արեւելքում ստեղծված ծանր վիճակի, Դուք որպես անձնազոհ եւ նվիրյալ հոգեւորական,

որպես քաջ հովիվ, Միացյալ Նահանգներից վերադարձաք հայրենի Սիրիա՝ անձնվիրաբար հանձն առնելով հովվապետի ծանր լուծը, որպեսզի պատմական այս բարդ շրջանում առավել չափով ու նվիրումով ծառայեք Ձեր ժողովրդին: Ձեր ներկայությունը Սիրիայում եւ Ձեր ծավալած գործունեությունը հանուն խաղաղության քաջալերանք է բոլոր հավատացյալների համար, որոնց գերագույն ձգտումն ու նպատակը խաղաղության ու կայունության անհապաղ հաստատումն է, արդարության հաղթանակը՝ ընդդեմ ահաբեկչության ու պատերազմի չարիքի: Մենք մեր զորակցությունն ենք բերում Ձերդ Սրբությանը եւ Ձեր անձի միջոցով Սիրիայի ժողովրդին՝ առ Աստված աղոթքով, որ դադարեն ռազմական գործողությունները եւ Սիրիայի եղբայրական ժողովուրդը լծվի ավերված քաղաքների վերաշինման, իր շեն, բարօր ու երջանիկ կյանքի կերտման գործին »:

Այնուհետեւ Հայաստան եւ Մայր Աթոռ իր այցին անդրադարձավ Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.-ն: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր պետն ուրախությամբ ընդգծեց, որ իր գահակալությունից հետո առաջին հովվապետական այցը կատարում է Հայաստանյայց Առաքելական քույր Եկեղեցուն.

«Մեր խոնարհումն ենք բերում այն վայրում, որտեղ 1700 տարի առաջ իջավ Աստծու Միածին Որդին եւ իր փառքով լցրեց հայ ժողովրդի հոգին: Ուրախ ենք այցելել Հայ Եկեղեցուն եւ Ձերդ Սրբությանը, որովհետեւ մենք կիսում ենք ձեզ հետ ոչ միայն հավատը, այլեւ արյունը: ...Եկել ենք այս օրերին մեր երախտագիտությունը հայտնելու Ձեզ՝ հայ ժողովրդի Ձեր հոգեւոր առաջնորդության համար, եկել ենք աղոթելու ոչ միայն Սիրիայի, այլեւ համայն աշխարհի խաղաղության համար»:

Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ. Պատրիարքը խոսեց նաեւ Սիրիայում եւ Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների առջեւ ծառացած մարտահրավերների մասին՝ հավելելով, որ դժվարին այս ժամանակներում հոգեւոր առաջնորդների պարտականությունն է հույս ներշնչել իրենց համայնքներին: Եփրեմ Բ. Պատրիարքը մասնավորապես ընդգծեց, որ հավատակից եղբայրների օգնությունն ու աղոթքները զորացնում են Ասորի եկեղեցուն եւ հավատավոր ժողովրդին՝ շարունակելու քրիստոնեական վկայությունը Սիրիայում: Այս առիթով Նորին Սրբությունն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Սիրիայի բարեպաշտ

ժողովրդին եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցուն մշտապես ցուցաբերվող զորակցության համար:

Բարիգալստյան «Հրաշափառի» արարողությունն ավարտվեց միասնական Տերունական աղոթքով:

Իգնատիոս Եփրեմ Բ. պատրիարքի այցելությունը Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիր

Հոկտեմբերի 11-ին Ամենայն Հայոց Հայրապետն ու Ասորի Ուղղափառ եկեղեցու պատրիարքը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների եւ Ասորի Եկեղեցու պատվիրակության ուղեկցությամբ, այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Իհարկե, այցելությունը լոկ պաշտոնական բնույթ չէր կրում. Ասորի եկեղեցու գահակալը, իր խորը վշտակցությունն ու աղոթակցությունը հայտնելով հայ ժողովրդին, միաժամանակ աղոթում եւ հարգանքի տուրք էր մատուցում իբրեւ ներկայացուցիչն այն եկեղեցու ու ազգի, որ Ի. դարասկզբին իրենց միլիոնավոր հայազգի դավանակցիների հետ միասին հարյուր հազարներով ենթարկվեցին ծրագրված ցեղասպանության եւ բնաջնջման: Սրա վկայությունն էր Հայ եւ Ասորի եկեղեցիների հովվապետերի աղոթակցությամբ կատարված հոգեհանգստյան արարողությունը՝ ի հիշատակ բյուրավոր հայ եւ ասորի նահատակների:

Ասորի Ուղղափառ եկեղեցու պատրիարքի մասնակցությունը Դիլիջանի միջազգային դպրոցի բացմանն ու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին նվիրված հանդիսությանը. ընդունելություն ԵՊՀ-ում

Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ասորի Ուղղափառ եկեղեցու պատրիարքի այցելությունը հագեցած էր նաեւ կրթամշակութային մի շարք միջոցառումներով, որոնց մեջ, իհարկե, կենտրոնական տեղ էին գրավում Դիլիջանի միջազգային դպրոցի բացումը (հոկտեմբերի 11) ու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյա հոբելյանը (հոկտեմբերի 12): Դիլիջանի միջազգային դպրոցի բացմանը, անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում դպրոցի կարեւորագույն դերին ու առաքելությանը՝ Նորին Սրբություն Գարեգին Բ.-ն մասնավորապես նշեց.

«Գոհունակ սրտով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ Դիլիջանի միջազգային դպրոցի բացման հանդիսավոր արարողության առիթով:

Ողջունում ենք «Միացյալ աշխարհի քոլեջներ» կրթական կազմակերպության գործունեության շրջանակներում Դիլիջանի մի-

Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք
Նորին Սրբություն Մորան Մոր Իգնատիոս Եփրեմ Բ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ամենասուրբ Հայրապետը ընթեռնում է սուրբգրային մասը

ջազգային դպրոցի հիմնադրման նախաձեռնությունը: Կրթօջախների բացումը միշտ բարի եւ լուսավոր հույսերի ավետիս է ու առիթ: Ուսումն ու կրթությունը եղել եւ մնում են կյանքի առաջընթացի եւ հասարակության բարեփոխման հիմնական գրավականները:

Բարձր ենք գնահատում, որ «Միացյալ աշխարհի քոլեջներ» կրթական կազմակերպությունն աշխարհի բազմաթիվ երկրներում հիմնադրած իր կրթական հաստատություններում ուսման ու կրթության շուրջ միավորում է տարբեր ազգերի ու ժողովուրդների զավակների՝ դրանով իսկ նպաստելով մարդկանց միջեւ խաղաղության ու բարեկամության ամրապնդմանը, ազգամիջյան համագործակցության ընդլայնմանը եւ մարդկության ապահով ու անվրդով կյանքի ու զարգացման նպատակների իրագործմանը: Սա մեծ առաքելություն է, առաքելություն, որն արդիական է եղել ինչպես նախկինում, այնպես եւ ներկայում, երբ աշխարհն ալեկոծվում է սիրո պակասից, անհանդուրժողականությունից, կրոնական ու ազգայնական ծայրահեղականության դրսեւորումներից, որոնց ցավալի հետեւանքներն այսօր տեսանելի են հատկապես Մերձավոր Արեւելքում:

Դիլիջանում բացվող այս դպրոցը, որ առայժմ միակն է տարածաշրջանում, նույնպես տեղակայված է աշխարհա-քաղաքական այնպիսի գոտում, որի ամենաբնորոշ բնութագրիչներից մեկը «փխրուն խաղաղությունն» է: Մեր երկիրը՝ Հայաստանը եւ մեր ժողովուրդը մշտապես դրսեւորել են իրենց հավատարմությունը խաղաղ համակեցության ու գործակցության համամարդկային արժեքներին՝ դրա համար, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, հաճախ վճարելով իր արյամբ ու կյանքով: Այս իմաստով Մենք խիստ խորհրդանշական ենք նկատում Հայաստանում նմանօրինակ դպրոցի հիմնադրումը:

Կրթությունը մեր ժողովրդի ավանդական առաջնահերթություններից է: Վանքերն ու եկեղեցիները, որոնցով շրջապատված է Դիլիջանի միջազգային այս դպրոցը, մեր ժողովրդի համար մշտապես եղել են նաեւ օջախներ ուսման ու կրթության: Հավատացած ենք, որ այս սրբավայրերից ճառագող օրհնությունն առավել արդյունավոր պիտի դարձնի դպրոցի առաքելությունը եւ առավել պտղաբեր՝ ջանքերը դպրոցի հիմնադիրների, ուսուցիչների եւ աշակերտների:

Մեր առաջին բարեմաղթանքն ուղղված է դպրոցի ուսուցիչներին եւ սաներին, որպեսզի ամենայն սիրով ու ջանադրությամբ ուսուցա-

նեն եւ ուսանեն, կարողանան գնահատել եւ մանավանդ՝ հարգանքով վերաբերվել ինչպես սեփական, այնպես եւ այլ ժողովուրդների հոգեւոր ու մշակութային արժեքներին:

Մեր օրհնությունն ու մաղթանքն ենք բերում ՀՀ Նախագահ Տիար Սերժ Սարգսյանին, ԼՂՀ Նախագահ Տիար Բակո Սահակյանին եւ պետական պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սերբիայի Հանրապետության Նախագահ Տիար Տոմիսլավ Նիկոլիչին, ովքեր իրենց ներկայությամբ առավել նշանակալի են դարձնում դպրոցի բացման հանդիսավոր այս արարողությունը՝ հավելյալ պատասխանատվություն ներշնչելով դպրոցի տնօրինությանն ու մանկավարժներին, կրթական գործի կազմակերպման ու իրականացման իրենց առաքելության մեջ:

Եղբայրական սիրով ողջունում ենք այստեղ ներկայությունը Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Սրբություն Մոր Իգնատիոս Եփրեմ Երկրորդի, ով իր ընտրությունից հետո, առաջին անգամը լինելով, այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մեր գորակցությունն ենք բերում Նորին Սրբությանը՝ ի դիմաց Սիրիայում հավատավոր ասորի ժողովրդի դիմագրաված դժվարությունների ու նեղությունների:

Մեր բարեմաղթանքներն ու գնահատանքն ենք բերում նաեւ Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնադիրներին ու կառավարիչներին՝ Տիար Ռուբեն Վարդանյանին եւ նրա մեծազնիվ Տիկնոջը՝ Վերոնիկա Ջոնաբեանդին, Տիար Գագիկ Աղիբեկյանին, Տեր եւ Տիկին Նուբար եւ Աննա Աֆեյաններին, Տիար Վլադիմիր Ավետիսյանին, Տիար Օլեգ Մկրտչյանին եւ Տիար Ջոն Փաղրֆութին:

Աղոթում ենք, որ Ամենողորմ Տերը խաղաղություն պարգեւի համայն մարդկությանն ու ամբողջ աշխարհին եւ օրհնելով բազմապատկի ներդրվող բոլոր այն ջանքերն ու նախաձեռնությունները, որոնք նպաստելու են խաղաղության ու մարդկանց միջեւ համերաշխության հաստատման աստվածահաճո գործին: Տիրոջ սերը, շնորհն ու խաղաղությունը ամենքիդ հետ լինեն. ամեն:»

Հաջորդ օրվա երեկոյան Ասորի Ուղղափառ եկեղեցու պատրիարքը հյուրընկալվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարկի ներքո՝ մասնակցելու ճեմարանի հիմնադրման 140-ամյակի հոբելյանական հանդիսությանը: Նորին Սրբությունն իր խոսքում հատկապես կարեւորեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նվիրական առաքելության շարունակականության պահպանումը՝ իբ-

րեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ հայ ժողովրդի հոգեւոր կարիքներին նվիրված երիտասարդ հոգեւորականների եւ սպասավորների կրթական օջախ: Հանդիսությանն իրենց շնորհավորական ուղերձներն ու զգացումներն արտահայտեցին նաեւ Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ.-ն, ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ճեմարանի նախկին տեսուչ Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, մշակույթի եւ կրթության գործիչներ ու ԳՀՃ մանկավարժներ:

Ասորի Ուղղափառ եկեղեցու հովվապետի այցի կարեւոր մաս կազմած՝ գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ հանդիպման հաջորդ կարեւոր հանգրվանը Նորին Սրբության հանդիպումն էր ԵՊՀ դասախոսական եւ ուսանողական կազմի հետ՝ Մայր բուհի գիտխորհրդի նիստերի դահլիճում, սույն թվականի հոկտեմբերի 13-ին: ԵՊՀ-ում, ռեկտոր Արամ Սիմոնյանի բարիգալստյան խոսքից հետո Ասորի Եկեղեցու հովվապետն անդրադարձավ վերջին տարիներին Սիրիայում առկա կրոնական եւ քաղաքական հիմնախնդիրներին՝ մասնավորապես նշելով. «Սիրիան բազմաթիվ հայերի ու ասորիների համար երկրորդ հայրենիք է: Ցավով պետք է նշեմ, որ այսօր Սիրիայի հայկական եւ ասորական համայնքներն այդ երկրի ժողովրդի հետ շարունակում են մարդկային եւ նյութական մեծ կորուստներ կրել»: Անդրադարձներ եղան նաեւ հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների նոր փուլի հեռանկարներին՝ իբրեւ Հայ եւ Ասորի եկեղեցիների դարավոր պատմության ու եղբայրական հարաբերությունների նորօրյա դրսեւորում: Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ.-ն հատկապես կարեւորեց այդ հարաբերությունների կրոնական կողմը: Ասորի ուղղափառ եկեղեցու հոգեւոր պետը նշեց նաեւ, որ հայ եւ ասորի քույր եկեղեցիները հիմնված են միեւնույն քրիստոսաբանության ու սրբազան ավանդության վրա եւ դարեր շարունակ գործել են կողք կողքի՝ իրենց նպաստը բերելով երկու բարեկամ ժողովուրդների միջեւ կապերի ամրապնդմանը: Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ.-ին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը բուհի կողմից շնորհեց ԵՊՀ հուշամեդալ՝ ի հիշատակ Ասորի Պատրիարքի պատմական այցելության:

Խաղաղության աղոթք Մերձավոր Արեւելքի համար

Ասորի Ուղղափառ եկեղեցու հովվապետի այցը Հայաստան տեղի էր ունենում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Մերձավոր Արեւելքում ծայր առած կրոնաքաղաքական հակամարտությունների հետեւանքով զոհվում էին հազարավոր անմեղ մարդիկ, իսկ իսլամիստական ծայրահեղականների բռնություններին՝ զոհ գնում բազմաթիվ քրիստոնյա հոգեւորականներ

ու հավատացյալներ: Եւ բնականաբար, այս երեւույթը չէր կարող անտեսվել երկու գահակալների կողմից: Հոկտեմբերի 12-ին, հընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագի, Ասորի Ուղղափառ եկեղեցու գահակալի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ տեղի ունեցավ խաղաղության մասնավոր աղոթք՝ Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատման համար: Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամի մեջ կարեւորեց հատկապես Ասորի քույր եկեղեցու համար մատուցվող աղոթքն իբրեւ քրիստոնեական եղբայրական զորակցություն ասորի քրիստոնյա հավատացյալներին ու հոգեւորականներին.

«Միրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, հոգեւոր անհուն ուրախություն է Մեզ համար Ձերդ Սրբության, հավատացյալ մեր ժողովրդի եւ Հայաստանում հավատարմագրված դիվանագետների ու սիրիահայ համայնքի ներկայացուցիչների հետ այս սրբազան արարողության ընթացքում աղոթք վերառաքել առ Բարձրյալն Աստված՝ հանուն աշխարհում եւ մասնավորաբար Մերձավոր Արեւելքում խաղաղության, ժողովուրդների բարօր համակեցության ու համերաշխության:

Այս օրերին մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր ժողովուրդը վայելում են Ձեր օրհնաբեր ներկայությունը, աղոթքն ու զորակցությունը՝ փոխադարձաբար մատուցելով մեր եւ մեր ժողովրդի սերն ու ջերմ զգացումները Ձեզ եւ Ձեր անձի միջոցով՝ Ասորի մեր Քույր Եկեղեցու եւ ասորի ժողովրդի հանդեպ:

Ջերմության, եղբայրական սիրո այս դրսեւորումներն, արդարեւ, ունեն պատմական արմատներ, արտահայտությունն են մեր երկու Եկեղեցիների դարավոր հարաբերությունների, որոնք էլ ավելի են ամրապնդում մեր վկայությունն ու բարեկամությունը: Մենք արժեւորում ենք սերտ կապերը Ասորի Ուղղափառ Քույր Եկեղեցու հետ, որի պատմության դարավոր էջերը լեցուն են հանուն Քրիստոսի նահատակության պսակն ընդունած սրբերի հիշատակություններով: Մեր երկու ժողովուրդների համար պաշտելի են Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը եւ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետը, որոնց բարեխոսությունն անդադար հայցում են հավատացյալ մեր զավակները: Բազում են այսպիսի վկայությունները, որոնք առնչվում են ոչ միայն մեր Եկեղեցիների պատմությանը, այլ նաեւ աստվածաբանությանը, հայրախոսական եւ սրբախոսական գրականությանը:

Հավատակից մեր Եկեղեցիների ու ժողովուրդների հարաբերությունները սկիզբ են առել Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում:

Նրանք ոչ թե փոքրամասնություն են այս տարածաշրջանում, այլ Մերձավոր Արեւելքի հասարակությունների անբաժան եւ անքակտելի մասն են կազմում: Յավով ենք անդրադառնում ներկայումս Սիրիայում, Իրաքում եւ առհասարակ Մերձավոր Արեւելքում տիրող տագնապալից իրավիճակին:

Դժբախտաբար ականատես ենք պատերազմական վայրագությունների, որոնց զոհ են դառնում անմեղ մարդիկ՝ տարեց ու մանուկ, կանայք եւ ծերեր: Ոչնչացվում են սրբատեղիներ եւ իրենց հարազատ օջախներից տեղահանվում ու բռնի դավանափոխ են արվում քրիստոնյաները: Շեն ու բարգավաճ քաղաքները վերածվել են ավերակների: Պատմության մեջ առաջին անգամ լռել է քրիստոնեական աղոթքը Իրաքի Մուսուլ քաղաքում: Օրեր առաջ ավերվեց նաեւ Դեր Զորի՝ Հայոց Ցեղասպանության 1.5 միլիոն զոհերի հիշատակը հավերժացնող Սրբոց Նահատակաց եկեղեցին: Ոչնչացվում է եզդի ազգաբնակչությունը, եւ գերեվարվում են հոգեւորականներ, որոնց շարքում մեր քույր Եկեղեցիների սպասավորներ Յոհաննա Գրիգորիոս Իբրահիմ եւ Բուլոս Յազիչ մետրոպոլիտները:

Խստորեն դատապարտում ենք յուրաքանչյուր գործողություն, որն իրականացվում է կրոնի շահարկմամբ՝ մահ ու ավեր սփռելով: Ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Աստված խռովության Աստված չէ, այլ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ. 33): Խաղաղություն, որի համար հանապազ աղոթում է եւ կարելի ջանքեր բերում Քրիստոսի Սուրբ Եկեղեցին: Քիչ հետո մենք միասնաբար աղոթք պետք է առաքենք առ Բարձրյալն Աստված Մերձավոր Արեւելքում պատերազմական գործողությունների դադարեցման համար, որպեսզի խաղաղությունը վերահաստատվի տարածաշրջանում եւ կյանքի ապահով ընթացքը բարօրություն եւ խնդություն բերեն այնտեղ ապրող ժողովուրդներին:

Հաջորդ տարի մենք հիշատակելու ենք Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը: Աղոթքով հիշելու ենք նաեւ ասորի մեր քույրերին ու եղբայրներին, ովքեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության տարածքում զոհվեցին թուրքական յաթաղանից: Բազում փորձություններ հաղթահարած խաղաղասեր մեր ժողովուրդների աղոթքն է, որ հաղթանակող մնան ազգերի ու մարդկանց մեջ սերն ու եղբայրությունը, իրավունքն ու

արդարությունը՝ ընդդեմ ատելության ու թշնամության, ահաբեկչության ու պատերազմի չարիքների:

Աղոթում ենք, որ Տերը օրհնի մեր երկրներն ու ժողովուրդներին, աշխարհը համայն, որպեսզի մարդկությունը Տիրոջ օրհնությամբ ընթանա «ի տեղի դալարուջ եւ առ ջուրս հանգստեան» (հմմտ. Սղմ. ԻԲ. 3)»:

Այնուհետեւ Ասորի Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր դասի եւ հավատացյալների ողջույններն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքը՝ շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին հրավերի եւ ջերմ ընդունելության, ինչպես նաեւ Սիրիայի համար դժվարին այս ժամանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հայ Առաքելական Եկեղեցու կողմից Սիրիայի ժողովրդին ցուցաբերվող զորակցության համար.

«...Մեր երկու քույր Եկեղեցիները կիսում են մեկ առաքելական հավատքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, «այն հավատքը, որ մեկ անգամ ընդմիշտ ավանդվեց Աստծու սուրբ ժողովրդին» (Հուդ. Ա. 1): Ավելին, մենք կիսում ենք մեր մեծ նախահայրերի ուսուցումները, որոնք ներշնչվել են Սուրբ Հոգուց: Մենք կրողն ենք սրբերի կողմից պահպանված ավանդությունների, որոնք ընդհանուր են մեր երկու Քույր Եկեղեցիների համար: Մենք միասին ենք ձեւավորել այս տարածաշրջանի պատմությունը՝ վկայություն տալով Ավետարանին եւ քրիստոնեության տարածմանը:

...Ընդհանուր պատմությունը միակ բանը չէ, որ մենք կիսում ենք: Մեր երկու ժողովուրդներն իրենց անմեղ արյունն են հեղել նահատակության ընդհանուր խորանի վրա մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատի համար: Մարտիրոսությունը խորհրդանիշ է եղել մեր երկու հալածված Եկեղեցիների համար: Տարբեր ժամանակներում մեր ժողովուրդները նահատակներ են տվել, որոնց կյանքը զոհաբերություն եւ նվիրատվություն էր հանուն մեր Եկեղեցիների շարունակականության եւ աճի:

Այսօրվա Ավետարանում կարդացինք, որ մի այրի կին տվեց իր ունեցածը, քանզի հավատ ուներ առ Աստված՝ վստահ լինելով, որ նա իր բոլոր կարիքները կհոգա (հմմտ. Մարկ. ԺԲ. 41-44): Բայց նրա տվածից առավել է, երբ մեկն ինքն իրեն է տալիս: Տալու ո՞ր ձեւն է առավել մեծ, քան ինքնազոհաբերությունը: Առավել ի՞նչ կարող է ինչ-որ մեկն առաջարկել, քան իր սեփական կյանքը հանուն նրա,

ում սիրում է: Սա է յուրաքանչյուր նահատակի օրինակն ամեն դարում. նրանք զոհաբերում էին իրենք իրենց հանուն այն մարդկանց, ում սիրում էին: ...Իսկապես, բոլոր նահատակները մահն ընդունել են եւ դրան մոտեցել հոգեւոր ուրախությամբ՝ շնորհիվ Քրիստոսի հանդեպ իրենց սիրո: Նրանք մահացան հանուն Նրա եւ հարգանքի արժանացան Եկեղեցում: Նրանց մասունքները հրաշքի աղբյուր դարձան մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ: Ե՛ւ ասորի, և՛ հայ հավատացյալները կիսել են նահատակության տառապանքը: Սա ցույց է տալիս, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր ունեցած սերը նույնն է, եւ մենք պատրաստ ենք առաջարկել մեր կյանքերը եւ ապավինել Նրան: Սա հնչող պատասխանն է Ս. Պողոսի խոսքերի, որ ասում է. «Թեկուզեւ ձեր հավատին իբրեւ պատարագ եւ զոհ ընծայվեմ, ուրախ եմ եւ հրճվում եմ ձեր բոլորի հետ» (Փիլ. Բ. 17) եւ պնդում է, որ իր համար «կյանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլ. Ա. 23), որը բաղձալի ցանկություն է նահատակության համար՝ հանուն Քրիստոսի սիրո: Այս ոգով են մեր հայրերը հանդուրժել հալածանքը, եւ մեծ թվով նահատակներ են զոհվել հանուն Քրիստոսի: Այս հալածանքներին են շարունակաբար ենթարկվել մեր Եկեղեցիներում այնպես, որ ամեն մի սերունդ Եկեղեցին ապահովել է նահատակներով, որը հարստացրել է սրբերի պատմությունը հավատքի առավել հերոսներով: Ահա թե ինչպես են մեր Եկեղեցիները պահել ուղղափառ հավատքը եւ պայքարել ընդդեմ դաժան հալածանքների: Մենք միասին ենք քայլում Գողգոթայի ճանապարհով, որն առաջնորդում է մեզ դեպի Քրիստոսի խաչը: Մենք սա անում ենք կյանքի եւ փրկության հույսով, որ տրվեց մեր Տիրոջ հարությամբ: Կողք կողքի մեր Հայ եւ Ասորի Եկեղեցիները հաստատուն կանգնեցին չարի ուժի դեմ, որը ցանկանում էր հավատացյալներին տանել դատապարտման եւ հավերժական կործանման: Միասին մենք մեր հավատքի առաքելությունը վկայեցինք, որ Քրիստոսն է Տերը եւ որ մենք ճշմարտապես Նրա խաղաղ եւ խաղաղասեր աշակերտներն ենք»:

Պատարագի սրբազան արարողությանն ու Մերձավոր Արեւելքի համար մատուցվող խաղաղության աղոթքին ներկա էին թեմական առաջնորդները, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա առաքելությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռի բարերարներ, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ ԱԳ փոխնախարար Սերգեյ Մանասարյանը, Հայաստանում ապաստան գտած սիրիահայեր, Հայ կանանց միջազգային ընկերակցության 7-րդ միջազգային համաժողովի մասնակիցները:

Ընդունելություն ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից

Հոկտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն եւ Նորին Սրբություն Իգնատիոս Եփրեմ Բ-ն հյուրընկալվեցին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից: Հանդիպումը հատկապես կարեւորվեց ՀՀ նախագահի կողմից արված երաշխավորությամբ, որ Հայաստանի Հանրապետությունը կողմնակից է Մերձավոր Արեւելքում եւ մասնավորապես Սիրիայում առկա հակամարտության օր առաջ խաղաղ կարգավորմանը: Նախագահի հավաստմամբ՝ ՀՀ-ն ամենատարբեր միջազգային հարթակներից, մասնավորապես ՄԱԿ-ի շրջանակներում, պարբերաբար բարձրաձայնում է Մերձավոր Արեւելքի ճգնաժամի արդյունքում իսլամիստական ծայրահեղականների կողմից կրոնական եւ ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող բարբարոսությունների մասին: Հանդիպմանն անդրադառնալով Մերձավոր Արեւելքում՝ մասնավորապես Սիրիայում տեւական ճգնաժամի եւ ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված ծանր իրադրությանը՝ զրուցակիցները նշել են նաեւ, որ այդ իրավիճակը որպես սեփական ցավ է ընդունվում ինչպես հայ, այնպես եւ ասորի ժողովրդի կողմից, քանզի Սիրիան բազմաթիվ հայերի ու ասորիների համար երկրորդ հայրենիք է: Նրանք ցավով են նշել, որ այսօր Սիրիայի հայկական եւ ասորական համայնքները այդ երկրի ժողովրդի հետ միասին շարունակում են մարդկային եւ նյութական մեծ կորուստներ կրել:

Համատեղ հայտարարություն

Ասորի Ուղղափառ հովվապետի այցելությունն իր կարեւոր ու տրամաբանական հանգրվանին հասավ հատկապես հոկտեմբերի 13-ին՝ հայ եւ ասորի գահակալների կողմից համատեղ ստորագրված հայտարարությամբ, որն իր վավերագրական եւ պատմական բնույթով կարեւորագույն երեւույթ է ընդհանրապես հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների զարգացման հեռանկարային առումով: Ընդհանուր առմամբ Համատեղ հայտարարության բովանդակային առանձին կետեր եկեղեցական հարաբերությունների լուսաբանման առումով կարեւոր ներդրում են հայ-ասորական բարեկամության դարավոր ավանդույթի մեջ: Հայտարարության մեջ հատկապես առանձնացվում է երկու կարեւոր կողմ՝

ա. Դավանաբանական, որը ներառում է հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների քրիստոսաբանական, ծիսական եւ եկեղեցաբանական նույնությունը.

բ. Հովվական, որի հիմնական նպատակն է հայ-ասորական եկեղեցական հարաբերություններին տալ ավելի արդիական տեսք՝ շեշտելով հատկապես ժամանակակից աշխարհում առկա մարտահրավերներն ու խնդիրները միասին հաղթահարելու պատրաստակամությունը: Այլ խոսքով՝ վերոնշյալ կետն արծարծում է այս աշխարհում քրիստոնեական հավատի վկայությունը միասնական կերպով բերելու կարեւոր, եկեղեցաբանական հաստատումը:

Իբրեւ եզրափակիչ խոսք՝ ստորեւ ամբողջությամբ մեջբերում ենք Համատեղ հայտարարության տեքստը՝ իբրեւ կարեւոր մի վավերագիր հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների նոր փուլի ստեղծման ու զարգացման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Անտիոքի ու Համայն Արեւելքի Պատրիարքն ստորագրեցին համատեղ յայտարարություն.

«Մենք՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբութիւն Մար Իգնատիոս Եփրեմ Բ. Պատրիարքը, գոհութիւն ենք մատուցում Ս. Երրորդութեանը՝ Հօրը, Որդուն եւ Ս. Հոգուն, որ առիթ ընձեռեց մեզ՝ հանդիպելու համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, եղբայրական հրաւէրով Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Քրիստոսաւանդ ողջոյնով վերահաստատելու եղբայրական սէրը երկու հովուապետերի միջեւ, հաւատքի միութիւնը եւ մեր Քոյր Եկեղեցիների համագործակցութիւնը շարունակելու պատրաստակամութիւնը:

Հայ եւ Ասորի առաքելահիմն Ուղղափառ Քոյր Եկեղեցիներն ունեն միեւնոյն քրիստոսաբանութիւնը եւ սրբազան աւանդութիւնը, հայրաբիսական եւ ծիսական ժառանգութիւնը, ընդհանուր սրբեր, խոստովանողներ եւ վկաներ: Ուրախ ենք արձանագրել, որ այսօր էլ սերտօրէն զարգանում են պատմական ակունքներ ունեցող յարաբերութիւնները մեր երկու Եկեղեցիների միջեւ:

Յարագնայ փոփոխութիւնների աշխարհում մեր Եկեղեցիները հովուական իրենց կեանքում նոր մարտահրաւէրների առջեւ են կանգնած: Կարեւորում ենք մեր երկկողմ յարաբերութիւնների զարգացումը հոգեւոր եւ աստուածաբանական կրթութեան, հովուական կեանքի, վանականութեան խթանման գործում: Մեր քաջալերանքն ենք բերում մեր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ շարունակելու փոխգործակցութիւնը թեմական մակարդակներում:

Մեծապէս մտահոգուած ենք Մերձաւոր Արեւելքում տիրող իրավիճակով: Այսօր Մերձաւոր Արեւելքի երկրները, որոնք օրրանն են միաստուածեան կրօնների եւ որտեղ դարեր շարունակ կողք կողքի ապրել ու արարել են տարբեր կրօնների ներկայացուցիչներ, այսօր գտնւում են մեծ ճգնաժամի մէջ: Խստօրէն դատապարտում ենք բոլոր ահաբեկչական խմբաւորումների եւ կրօնական ծայրահեղականների կողմից իրականացուած գործողութիւններն ու կիրառուած բռնութիւնները քրիստոնեաների, մահմեդականների, եզդիների եւ միւս փոքրամասնութիւնների նկատմամբ: Յոյս ունենք, որ Հիւսիսային Իրաքում եւ Սիրիայում ահաբեկչութեան դէմ պայքարը կարդիւնաւորուի տարածաշրջանում կայուն խաղաղութեան հաստատմամբ եւ բռնի տեղահանուած բնակիչները կը վերադառնան իրենց բնակավայրերը:

Մեր մտահոգութիւնն ենք յայտնում նաեւ Սիրիայում շարունակուող պատերազմի առնչութեամբ: Եւս մէկ անգամ կոչ ենք անում միջազգային հանրութեանը՝ յարգելու Սիրիայի ժողովրդի՝ բացառապէս խաղաղ ճանապարհով իրենց քաղաքական խնդիրները եւ տարաձայնութիւնները լուծելու կամքը: Աղօթում ենք առեւանգուած երկու արքեպիսկոպոսների՝ Գրիգորիոս Եօհաննայ Իբրահիմի եւ Բուլոս Եազիջի շուտափոյթ ազատ արձակման համար: Լիայոյս ենք, որ միջազգային հանրութիւնը կը շարունակի մարդասիրական օգնութիւն ցուցաբերել տարածաշրջանին, լինի դա մարդկային կեանքի համար օգտակար ֆինանսական, բժշկական թէ այլ բնոյթի, եւ կվերացնի մարդասիրական օգնութեան ճանապարհի բոլոր խոչընդոտները:

Հարիւր տարի է անցել մարդկութեանն այդքան դժբախտութիւն եւ չարիք պատճառած Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից: Աշխարհի տարբեր ազգեր եւ պետութիւններ յիշատակում են մարդկութեան չարիքները եւ անդրադարձ են կատարում անդառնալի կորուստներ պատճառած այդ իրադարձութիւններին: Պատերազմը ծանր հետեւանքներ ունեցաւ ինչպէս հայերի համար, ովքեր կորցրեցին մէկ ու կէս միլիոն հայրենակիցների եւ իրենց հայրենիքի մեծ մասը, այնպէս էլ ասորի ժողովրդի համար, ով կորցրեց աւելի քան հինգ հարիւր հազար բնակչութիւն: Մենք աղօթք ենք բարձրացնում հայ եւ ասորի նահատակների, ինչպէս նաեւ Առաջին համաշխարհային պատերազմի միւս զոհերի համար: Հրաւիրում ենք համայն քրիստո-

նէական աշխարհին՝ միանալու Հայոց Ցեղասպանության եւ Ասորի Սայֆոյի 100-րդ տարելիցների յիշատակման միջոցառումներին 2015 թուականին: Կոչ ենք անում քաղաքակիրթ աշխարհին՝ ճանաչելու եւ դատապարտելու հայ եւ ասորի ժողովուրդների, ինչպէս նաեւ այլ քրիստոնեայ համայնքների դէմ իրագործուած ոճրագործութիւնները:

Գոհութիւն ենք մատուցում Ամենակալ Տիրոջը՝ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկայ համագործակցութան համար, որոնք ունեն միեւնոյն հաւատքը: Ուրախութեամբ ենք արձանագրում, որ եկեղեցական մեր ընտանիքը էկումենիկ շարժման եւ երկխօսութիւնների մէջ է այլ Եկեղեցիների եւ քրիստոնէական համայնքների հետ: Պատմական այս նոր պայմաններում ասորուածաբանական երկխօսութիւնները պէտք է նպաստեն Քրիստոսի Եկեղեցու համընդհանուր վկայութեանն այս փոփոխուող աշխարհում: Ուրախ ենք, որ երկկողմ եւ բազմակողմ յարաբերութիւններ են զարգանում կրօնների եւ միջկրօնական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ՝ յանուն աշխարհի խաղաղութեան, ինչպէս նաեւ մարդկութեան բարօրութեան եւ բարգաւաճման համար:

Մենք առ Աստուած աղօթում ենք Եկեղեցիների պայծառութեան եւ աշխարհի ու յատկապէս Մերձաւոր Արեւելքի խաղաղութեան համար՝ հայցելով, որ Տէրը շուտափոյթ խաղաղաղութիւն եւ անխոով կեանք պարգեւի Միրիայի ժողովրդին»: